



ՀԱՄԱԼԵԱՆԵՐ ՌԹԻՎԵՐԾ լրագիրը հրատարակուում է իւրաքանչիւր ամսի 10 ին և 20 ին. տարեկան գինը ՃՌԱՔԱՂԻ հետ 'ի միասին է 5 ռուբ. արծաթ. իսկ կէս տարուանը 3 ռուբ. արծ. կանխիկ վճարելի:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10

Հ. 3

1861 ՄՄԻ

ՊՈԼԻՂԱՐՆԵՐԻ ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՐԺՈՂՈՒԹԻՒՆԸ:

Պոլղարաց ազգը սուաջինն եղաւ Սլաւոնական ազգե-
րից, որ ընդունեց Վրիստոնէական հաւատը, և պահպանեց
նորան, որպէս յայտնի է, անարատ և ամբողջ, համարեա թէ
հազար ամաց միջոցում, չնայելով իւր քաղաքական ոչնչու-
թեանը, որի մէջ գտանուում է: Աւ ահա այժմ ամսական և
օրական օրագիրները տարածում են շատ տխուր լուրեր կրօ-
նական շարժողութիւնների մասին, որ այժմ լինում են նո-
րա մէջ: Ամենայն կողմից ահա լսում ենք՝ թէ Պոլղարները
ընդունեցին «նէ» (սեպարատիստ) այսինքն Պապի գլխաւորու-
թիւնը, թէ նոքա կաթոլիկ են դարձել, և այլն: Յիրաւի քա-
նի մի անմիտ գլուխներ, խաբուելով ժողովուրդներից՝ համա-
ձայնեցան ընդունել «նէ» — բայց ոչ ամէնը, ոչ ամբողջ ազգը:

Պոլղարները, որոց Տաճկաց տէրութիւնը իւր վերջին
Հաբէ-Հէ-Մայանէ մէջ՝ ընդունից որպէս առանձին ազգ կամ
ժողովուրդ, կամեցան և հոգեւոր կողմից ունենալ իւրեանց
ազգային ներկայացուցիչքը, — և վճռեցին բաժանուիլ քա-
ղաքականապէս Առստանդնուպոլսի Պատրիարքութիւնից:
Պոլղարները առաջին անգամում խնդրում էին պատրիար-
քութիւնից, որ Սլաւոնական վիճակների համար, որոշուին
և նշանակուին եպիսկոպոսներ բուն Սլաւոնացեաց միջեց, որ
ժամերգութիւնը կատարուի Սլաւոնական լեզուաւ, որ ու-
սումնարանաց միջում որոշուի Յունական լեզուի տեղ Պոլղ-
արական լեզուն, որպէս գլխաւոր և ազգային լեզու: Այս
և այլ այսպիսի պահանջողութիւնները յայտնապէս ցուցա-
նում են ժողովրդի պիտոյքը, որ հասկանում է արդէն իւր
զօրութիւնը, և որոնում է միջոցներ և ճանապարհ նոցա
գործ դնելու համար: Պատրիարքութիւնը բարեօր չհամա-
րեց կատարել Պոլղարների այդպիսի ձգտումներ դէպ 'ի ազ-
գայնութիւն (բայց մի մոռանաք՝ թէ այդ պատրիարքութիւնը
Յունացն է): Պոլղարները զայրացած զնացին յառաջ. նո-
քա սկսան պահանջել բոլորովին բաժանումն Առստանդնու-
պոլսի պատրիարքութիւնից, և անկախ ազգային քահանայ-
ապետութիւն:

Չազատ տարակուսութիւնքը կամ լաւ ևս ստել անբա-
ւականութիւնքը վճռելու կամ խաղաղացնելու համար՝ նշա-

նակուեցաւ ազգային ժողով — *Ενοπλις*. բայց այդ ժողովը
ոչ մի տեսակ հաշտութիւն չկարողացաւ հիմնել: Մեծ վե-
զերն Վրպրդը-Փաշա Տաճկաստանի Աւրոպական գաւառ-
ների մէջ ճանապարհորդելու ժամանակ, հրաման էր ստա-
ցել զննել և տեղեկանալ այն յարաբերութիւնները, որ ու-
նէին Պոլղարները Յունաց հետ — և ստուգել այն մեղադ-
րանքը, որոց ներքոյ անկած էին Պոլղարները: Բայց նա վե-
րադառնալուց յետ՝ կոչելով բարձրագոյն Պոլղար Պոլղարաց
առաջաւորներին, առաջարկեց նոցա հնազանդիկ պատրիար-
քին: Այն ժամանակ Պոլղարներից մի քանիք (5 կամ 6
մարդ, ոչ աւելի), Վաթիկների յորդորանքով, սկսան հա-
մոզել իւրեանց հաւատակիցներից շատերին՝ ընդունել «նէ»:
Մակարիուպօլսոյ եպիսկոպոսը՝ Սրբազան Եւարիոնը (ազգաւ
Պոլղար, որ քանի մի տարի առաջ համարեա թէ բուն ձեռ-
նադրուեցաւ եպիսկոպոս Առստանդնուպոլսու Պատրիարքից)
կամելով հանդարտեցուցանել ջերմացեալ գլուխները, համո-
զեց բարձրագոյն Պոլղար նշանակել առանձին ժողով այդ գործը
անաչառ քննելու համար: Բայց այս ժողովի գումարուելուց
առաջ, մին անակնկալ դիպուած ժողովուրդների և Հայ-
Վաթիկի վարդապետների ձեռքը տուեց այնպիսի վէպ, որ
պատճառ եղաւ շատ հեշտ դարձուցանելու նոցա դէպ իւրեանց
կողմը. և այդ դիպուածը այս էր. անցեալ տարուց Վեկտորի
բեր ամսի 12 ին վաղելով եկաւ Պոլղարեան առաջնորդա-
րանը մի Պոլղար քահանայ, որ յայտնի է ինչ հնարքով
կարողացել էր ազատուիլ բանտարկութիւնից: Այս քահա-
նան ձեռնադրուած էր անցեալ ամսու. Եւարիոն եպիսկոպո-
սից, և ուղարկուած Պաղչէք (որ Սեծովի եղբորումն է, Վար-
նայից վերէ), ուր սկսած էր նա կատարել պատարագը Պոլղ-
արաց լեզուաւ. բայց այն տեղ զբաղարտութիւն արեցին նո-
րա վերայ այն բանի համար, որպէս թէ նա Ռուսաց գործա-
կալ է և պատկանում է *Православной Церкви* (православ-
ной церкви). բռնեցին անմեղ քահանային, և
շղթաներով կապած շողկնաւով տարան Առստանդնուպոլիս,
ուր և պահուում էր պահապանների ձեռքի տակ: Այս ան-
պատճառ զրկուելու էր իւր աստիճանից, եթէ Վեկտորի
12 ին, կէս օրում, որպէս ասացինք, չգար նա Պոլղարաց ա-
ռաջնորդարանը. . . Բայց նոյն օրը երեկոյին զարհուրանօք

խնայան առաջնորդարանում՝ թէ այդ քահանան, վախենալով նորից բանտ մտանել՝ փախել է Վաթիկանի մօտ Սան Պետրոսի, և յայտնել է իւր ցանկութիւնը ընդունելու։ Ժիզուխոները ուրախանում են՝ թէ կարող են վերջապէս բացալայտ և հանդիսաւոր ձեով սկսանել կատարել ունիական ժամերգութիւնը, և նշանակում են եկեղեցի Ս. Պետրոսի, Վաթիկանի մէջ, և արդէն Քրիստոսի ծննդեան առաջին օր (որը նոցա սովորութեամբ լինում է Վեկտորիայի 25 ին), նշանակեցին ունիական ժամերգութեան սկիզբն։

Այս գործը քաջալերութիւն տուեց Վաթիկանի, այնպէս որ նոքա Վեկտորիայի 18 ին կարողացան իւրեանց կողմը շրջել և մի այլ քահանայ Պուլլարաց եկեղեցուց՝ Հ. Թոմասին, որոյ հետ միաւորուեցաւ և Սոքալեան վանքի Յովսէփ վարդապետը, իւր տիրացուի հետ։ Նոքա ամէնքը ուղևորեցան այն օրը Հայ-Վաթիկան եկեղեցին, և Հայ-Վաթիկան Վատիկանի և քանի մի ժիզուխոների ներկայութեանը ընդունեցին «Հ. Թոմաս կարգաւոր նշանակուած երդումը՝ յաւելացուցին և այս՝ թէ ընդունում են Պապին որպէս Պետրոսի յաջորդ և գլուխ քրիստոնէից։ Պատարագից՝ յետ կրօնափոխ Պուլլարները համբուրեցան ժիզուխոների հետ, գնացին նոցա սենեակը, և այն տեղ նոցանից իւրաքանչիւրը ստորագրեց իւր հրաժարման հետ միասին և յաւիտեանական իւր ամբիւր։ Ունիական պատարագը կատարուեցաւ Վեկտորիայի 25 ին անցեալ տարուց Հայ-Վաթիկան պատրիարքարանի հին եկեղեցու միջում, որ տուած էր այդ պատճառով ունիականին։ Արժանաւորների թիւը հասնում է այժմ 100 ից մինչև 150, բայց օրէց օր պակասելու վերայ է։ Նոքա յոյս ունենին և կարծում էին՝ թէ կստանան Պապից Վատիկանը, բայց նոցա յոյսը և կարծիքը չկատարուեցաւ, որովհետև Պապը տուեց նոցա հետեւեալ պատմութեանը խաղաղութիւն լեզուաւ՝ թէ «բոլոր սրտով պատրաստ է կատարել նոցա կամքը, բայց որովհետև պատրիարքութիւն ստանալու համար հարկաւոր է ունենալ կամ հինգ և կամ վեց եպիսկոպոս, ևս և հինգ հարիւր հազարից մինչև վեց հարիւր հազար ուղղափառ, ուստի այժմ նոցա ձեռքումն է լցուցանել այդ թիւը»։ Իհարկէ Պապի կամքը այն է, որ բոլոր ազգը կաթոլիկ դառնայ։ Բայց այս դեռ երկբայելի բան է։

ՀԱՄԱԵՒԵՐՆԵՐ

1861. Օգոստոսի 29.

ՊԵՆՏԵԿՈՆ

Թաղաւոր Վալսերուհին յաջողապէս կատարում է իւր առանձին ճանապարհորդութիւնը։ Օգոստոսի 15 ին Վալսերուհին թաղաւոր Վալսեր հետ՝ ներկայ գտանուեցաւ Փաշիվայում, ազնուականների աղջկանց ուսումնարանի և եկեղեցու միջում կատարուած պատարագին, գնացին Փրկչական տաճարը և եկեղեցին, և այցելու եղան արձանին, որ Մեծին Պետրոսի յիշատակի համար կանգնուած է։ Թաղաւոր Վալսեր Քրիստոսի ծննդուց յետ, Վալսերուհին ճաշկերպութեամբ մէջ, և այդ հացկերպութիւնը հրաւիրուած էին և

Արքեպիսկոպոսը և գաւառի Վառապարիչը։ Ներկային, Նորին Մեծութիւնը նորից այցելութիւն ելաւ աղջկանց ուսումնարանին։ Ամսի 16 ին Վալսերուհին ընդունեց գաւառային և ուղևորայ ազնուականների առաջնորդներին, այցելութիւն ելաւ աղջկանց վարժարանին և Աղեքսանդրեան ապաստանարանին։ Ճաշից յետ Նորին Մեծութիւնը ուղևորեցաւ դէպ ի Քրիստոսի քաղաքը։

— Օգոստոսի 19 ին առաւօտեան ժամը 9 ին, բարեհաճեցան գալ Փեթրպոլիկ այս մայրաքաղաքը՝ Նոյն Վալսերական Բարձրութիւնը, Մեծ Իշխանն Աղեքսանդր Աղեքսանդրովիչ և Վլադիմիր Աղեքսանդրովիչ։

— Օգոստոսի 22 ին, առաւօտեան 11½ ժամին, բարեհաճեցաւ գալ այս մայրաքաղաքս Մարքուպուս — Վիթեկորտի երկաթի ճանապարհի վերայով՝ Նորին Վալսերական Բարձրութիւնն Թաղաւոր Ժառանգը և Մեծ Իշխանն Նիկոլայ Աղեքսանդրովիչ։

ՏԵՐՈՒԹԵԱՆ

Բարձրագոյն հրամանի զօրութեամբ, որ տուած է Օգոստոսի 4 ին, Ս. Փեթրպոլիկի ուսումնական շրջանակի Հոգաբարձուն՝ ներքին Խորհրդական Յովսէփ Մեյսեր, նշանակեցաւ Ազգային Լուսաւորութեան բաժնի (Департамент) կառավարիչ, արձակուելով Հոգաբարձութեան պաշտօնից։

Ե.Օ.Գ.ԱՅԻՆ

Յունիս ամսի 9 ին, Վերապէ օրը, կատարուեցաւ Սոստանդուպոլում, ազգային սահմանադրութեան սկիզբաւորութեան առաջին տարեդարձի տօնախմբութեան հանդէսը։ Այն օրը հազարից աւելի Հայ երիտասարդներ երկու շողենաւով գնացել են Պէյքոզ, ուր յառաջուց մին կամար էին կանգնեցուցած դամբիկից, վարդերով զարդարուած, և երկու կողմից Սոստանդուպոլի պատկերները կախուած, և նոցա ցածում մեծ մեծ տառերով ԱՅԻՆ ԱՅԻՆ ՄԵՐԻՆԵՐԵՐԵՐԸ գրուած։ Հայ երիտասարդները շողենաւից ելանելուց յետ՝ ունեւոր իւրեանց առաջնում նուագարաններ, ազգային եղանակներ հնչեցուցանելով, կարգու գնացել են և դանիկայ կամարի տակից անց են կացել, ուր Մեհարեթ Էֆէն լրագրի խմբագրիչը տօնախմբութեան յարմար տաճիկէն մին գեղեցիկ ատենաբանութիւն է արած, որին բաղմութիւնը առէր ընդհատում է և դաժ սաստիկ ծափահարութիւններով։ Պարահանդէսներ և ուրախութիւններ, կատարելուց յետ, զանազան անձինք ևս ձառեր են կարգացած, որոց մինի մէջ յիշուած է Հայաստանի մէջ երկրագործութիւնը յառաջ տանելու հարկաւորութեանը վերայ։ Սոյն հանդիսին ներկայ գտանաւ Պաղղանցիներից մէկը ևս գաղղիարէն լեզուաւ ձառ է կարգացել, որի մէջ գովութեամբ հռչակում է Հայոց ազգի դէպ ի քաղաքի միջում արած յառաջադիմութիւնը։ Հանդէսը և ուրախութիւնը մինչև երկուց տեւեց մեծ շքեղութեամբ և ցնծութեամբ։ Ներկային իւրաքանչիւր մարդ դարձեալ շողենաւով վերադարձաւ իւր տունը ուրախ, և հայրենասիրական զգացմամբ լի սրտով։

Մենք ևս, քրտէս Հայաստանի զաւակ, ի հեռուստ շնորհաւորում ենք թէպէտ և յոյժ անաղանձ այդ ազգային

բանական ուսումնարան, որի տարեկան ծախքը կառնու էր իրենց վերայ իսկական Պուլլարեան վիճակների բնակիչները, նոյնպէս և այն Պուլլարները, որ բնակուում են տէրութեան այլ երկիրներում, որպէս և այլ ամենայն քրիստոնեաներ, որ կցանկանան մատուցանել իւրեանց յօժարակամ օգնութիւնը: Իսկ վարժարանի դասատուութիւնը կնշանակուի Պատրիարքի ցուցակով (programma), այն նախապէս շուրջեան համար, որ ուսումն չլինի հակառակ Արեւելեան եկեղեցուն:

4. Ուսումնարանի վերատեսչութիւնը կ'յանձնուի այն վիճակի Միտրապօլիտին, ուր կ'լինի ուսումնարանը, նոյնպէս և առանձին վերատեսչաների, որոց կ'ընտրեն փորձառու հոգեւորականները:

5. Բոլոր Պուլլարեան ուսումնարաններում, ամենայն ուսումից առաւել հրահանգուի Պուլլարի լեզուն և նորա պրակտութիւնը, բաց չի այն շարադրութիւններից, որ հակառակ են ուղղափառ հաւատի և իմ թաղաւորական կառավարութեանս:

6. Ըմենայն վերադրեալ կանոններից հեռանալու մասին, թէ ուսման կարգը չպահելու համար, և թէ վարժապետների անուշադիր ընտրութեան կամ նոցա իւրեանց պաշտօնը առանց ջանացողութեան կատարելու համար, միով բանիւ՝ վարժարանի վատ կառավարութեան տեսչութեան համար, պատասխանատու կ'լինին Միտրապօլիտը և վերակացուները:

7. Միտրապօլիտների ժողովումը ներկայ կ'գտանուին, որպէս և առաջ, մի կամ երկու Պուլլարեան Միտրապօլիտ, որ Պատրիարքի կանոնաւոր ընտրութեամբ կ'նշանակուին փոփոխակի երկու տարին մին անգամ:

8. Բաղկեղդնի Աստուածաբանական ուսումնարանը կ'ընդունուին, որպէս և յառաջ, աշակերտներ Պուլլարի ազգից:

9. Պուլլարեան Միտրապօլիտների և Եպիսկոպոսների եկամուտքը կ'սահմանուին առանձին կանոնադրութեամբ:

10. Իսկական Պուլլարեան Միտրապօլիտների և Եպիսկոպոսների վիճակներումը եկեղեցական պաշտօնակատարութիւնը կ'լինի Պուլլարի լեզուով:

11. Ուղղափառ Պուլլարներից, կոստանդնուպօլիս բնակուած երեսփոխաններից կ'ընտրուին ոմանք՝ Պատրիարքարանի և այլ շինուածների վերատեսչութեան համար:

12. Կոստանդնուպօլիս Պուլլարեան եկեղեցու սրահումը կ'հաստատուի՝ Պատրիարքի տեսչութեան ներքոյ՝ նախակրթարան, ուր կ'ստանան ուսումն և կ'ընթերցեն ընդհանրապէս և կ'սովորին իւրեանց լեզուն առանձնապէս՝ այն ուղղափառ Պուլլարների որդիքը, որ բնակուում են Կոստանդնուպօլիսում:

13. Եկեղեցական թղթերը կամ նամակները Պուլլարեան վիճակների Միտրապօլիտներին, Եպիսկոպոսներին և քրիստոնեաներին դարձուցած, կ'լինին Յունական և Պուլլարեան լեզուով:

14. Պատրիարքը ամենայն կերպիւ կ'հետևի, որ Պուլլարների կողմից իւրեան տուած իրաւացի խնդիրները կամ առաջարկութիւնները, ընդունէ և կատարէ:

15. Եթէ հարկը պահանջելու լինի, Պատրիարքը կարող է ուղարկել արժանաւոր հոգեւորականներ՝ Պուլլարեան Միտրապօլիտների և Եպիսկոպոսների, նոյնպէս և բոլոր առ հասարակ հոգեւորականների կամ վարժապետների վարքը քննելու համար, նոյնպէս և նոցա պակասութիւնները կամ յանցանքը ուղղելու նպատակով, որոց համբաւը կ'հասանէ նորա ականջը:

— Սան-Ֆրանսիսքօ քաղաքի դատաստանատուն կոչուեցան երեք Չինացիք, որ կամենում էին գողանալ գիշեր ժամանակ մին մատաղահասակ աղջիկ՝ Սիւ-Կէ անունով, որ նշանակուած է իւր և Կիւ-Կիւ: Չինացիք իւրեանց արդարացնելու համար մէջ բերին մի պայմանաթուղթ, որ եղած էր աղջկայ մօր և մին հարուստ մարդու շնորհակալութեամբ: Այդ մարդը արգէն վաղուց է որ բնակուում է Կալիֆօր-

նիայումը և պարտաւոր է բաւականին արդիւնաւոր առևտուրիւ, թէ և ոչ բոլորովին բարոյական: Նա իւր կողմն է քարշում և գնում մատաղահասակ աղջիկներ և գործ գնում նոցա իւր կամեցածի պէս: Սինկ-Կէի մայրը ծախել է իւր դուստրը Շօն-Թօնկուին 370 տոլլարով, և գեղեցիկ աղջիկը բերուեցաւ Սան-Ֆրանսիսքօ, բայց ունենալով հաստատուն բնութիւն, նա բոլորովին հրաժարուեցաւ հնազանդելու Շօն-Թօնկուին, այնոր համար որ դաշնադրութիւնը եղել է առանձնորա գիտութեան և համաձայնութեան, և գնաց իւր հալածիչների մօտից, որ կամենում էին զօրութիւն գործ դնել նորա վերայ: Դաշնադրութեան թուղթը նոյնպէս բերուեցաւ դատաստանատուն, բայց չնայելով սորան՝ բոլոր չորս Չինացիք բանտ դրուեցան, աղջկայ հետ կոպիտ և խիստ վարուելու պատճառաւ: Այս վճիռը շատ զարմացոյց և վերաւորեց Չինացիներին:

— Ըսում են՝ թէ Կոմս Կալուսը թողեց յետ իւր մահուան իւր օրագրական թերթերը, և թէ նորա եղբայրը մտադիր է ի լոյս ընծայել նորա միջոց այն ամենայն, որ արժանի են հրապարակելու:

— Վ իրեկատում, որ Մորալիսի մէջ է, 1863 թուականին պիտի տօնախմբուի քրիստոնէական հաւատոյ բնդունելութեան Հաղաւթաւոր, որի համար հաստատուած է արգէն ժողով՝ նախապատրաստութիւն անելու համար, և որի բոլոր ծախքը պիտի հասանէ մինչև 50,000 Աւստրիական կուլտէն:

— Կաղընոյ քանի մի գաւառներում՝ Յունիսի 22 ին սաստիկ միրիկը պատճառեց մեծամեծ վնասներ, և Կայսրը ուղարկեց մինչև 63 հազար ֆուանք բաժանելու այն մարդկանց, որ աւելի վնաս էին կրել:

— Ըսում են՝ թէ Տաճկաց նոր Ապտուլ — Ազիզ Սուլթանը պիտի այցելու թիւն ելանէ Փարէզ և Լոնտոն: Ապտուլ Մեճիտի ոսկեղէն և գոհարեղէն բաները ծախուում են Լոնտոնի մէջ մեծ դրով:

— Հազուագիւտ բաները, որ գտանուեցան Չինացոց Թաղաւորի ամառնային պալատում, ուղարկուեցան Փարէզ, և արդէն ցուցանում են նոցա ժողովրդին Մարսանեան Փալլիլիօն անուանեալ վրանի մէջ:

— Պ. Միշէ, որ «l'Oiseau», և «l'Insecte» գրութեան երեւելի հեղինակն է, նորեւումս շարադրեց մին նոր գիրք «Le Mer» վերնագրով, որի 18,000 օրինակը կ'ընկու ամսի մէջ ցրուեցաւ:

— Մի քանի շաբաթ առաջ Անգղիայում գետինը փորելու ժամանակ՝ փորուած տեղից սկսել է գուրս գալ կրակ (газ), որ մինչև ցայժմ վառուում է և չէ շփանում:

— Վ ալ անուն քաղաքի մէջ դատապարտեցին ի մահ մին եօթանասուն և հինգ տարեկան պառաւ կին, որ ածելով մորթել է իւր ութսուն տարեկան ծերունի մարդուն:

— Պերլինում ինքը իւրեան կախ տուեց մին տղայ, որ ստացել էր ուսումնարանից վատ վկայական: Նա վախենալով թէ ծնողքը կ'պատժեն նորան այդ բանի մասին, լաւ է համարել մեռանել:

— (Վերա Պէքքէր ուսանողին արտաքսեցին Լէյփցիկեան համալսարանից, ջնջելով նորա անունը բոլոր ցուցակների միջոց:

— Փարիզում ներկայացան Նապոլէոն Կայսեր Սիամի թագաւորի դեսպանները:

— Մէքսիկայում դուռն են մի նոր ցեղ մարդկային ազգի, որի նմանն զեռ մինչև ցայժմ չէին տեսած Ամերիկայի մէջ: Կարծում են՝ թէ սոքա են Թէյսթիք ազգի սերունդը, որ բնակուում էին այդ տեղ Ացթեքներից առաջ:

Ով ցանկանայ թղթակից լինել Լրագրիս՝ հաղորդելով ժամանակ ժամանակ նորանոր լուրեր ի վերայ տեղական գիտութեան, եկեղեցական հանդիսից, աղային դպրոցաց և ուսումնարանաց, առաջնորդական կարգադրութեանց, և այլն, կարող է իւր առաջին նամակի հետ յայտնել և իւր թղթակցութեան պայմանքը, որը եթէ ձեռնտու համարուին մեզ՝ կ'ընդունուին անձաւ շնորհակալութեամբ:

ԽՄԲԱԳՐԻԶՔ Մ. և Զ. ՄՍԵՐԵԱՆՅ